

“ԹՈՂ ՏՈՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԳ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՕԳՈՍՏՈՍ 1, 1894

ԹԻՒ 8

ՇԱՏ ԿԵԱՆՔԵՐՈՒ ՀԱՄԱՐ
ՊԱՏԱՍԻԱՆԱՏՈՒ

Վարը քնացող նաւորդներուն և նաւաստիներուն ապահովութիւնը կախեալ է այս ծեր նաւապետին որ հսկողութիւն կ'ընէ, Պէտք է ունենայ փորձառութիւն որ յարմար ըլլայ այսչափ փափուկ պաշտօնի մը, որովհետեւ պարտի նաւը կառավարել զիտնալ և ճաննալ այն ծովեզրը որուն կրնայ մօտենալ: Նաև պարտի ըլլալ աշաւորջ և անմիջապէս տեսնել վտանգը դեռ չպատահած, և իրեն հնազանդեցնել նաւաստիները որ իր հետ կը հսկեն: Եթէ ունենայ այս յատկութիւնները՝ նաւորդները ապահովութեամբ կը քնանան, հակառակ գոռացող հովերուն և խռովայող ալիքներուն:

Կը կարօտինք անձի մը որուն իմաստութեան և արթնութեան վրայ վստահելով կ'ապահով չունենանք թէ անվտանգ պիտի առաջնորդէ մեզ կենաց նաւարկութեան մէջ: Կո՛յ այսպիսի նաւուղիդ մը, և միայն մէկ մը: Ոչ միայն քաջ անդեակ է ամէն փոթորիկի, համաճարակի և երկրաշարժի, այլ և կը կառավարէ զանոնք: Մեր հողիներուն առաջնորդութիւնը Անոր յանձնենք և երբեք չվախնանք:

ԱԶՆԻՒ ԱՂՋԻԿ ՄԸ

Հետագայ դէպքը տեղի ունեցաւ Անկլէզի կղզիին մէջ շատ տարիներ առաջ, սակայն լսողները տակաւին կը յիշեն զայն: Դեռահաս աղջիկ մը բազուկներուն մէջ մանկիկ մը առած՝ օդ առնելու կը տանէր զայն նեղ ճամբէ մը որուն երկու կողմը



ՅԵՐ ԼԱԻԱՊԵՏԸ

պատ կար: Մտքէն երբեք չէր անցնել թէ այդ խաղաղիկ տեղը կրնար վտանգ պատահել, բայց յանկարծ անիւներու ձայներ եկան և հետզհետէ մօտեցան, և աղջիկը սոսկումով տե-

սաւ որ երկու կատաղի ձիերէ լծուած ծանր կառք մը ճամբայէն վար կը վազէ դէպ իր կողմը, սոսկալի արագութեամբ, ամէն բան ջարդ ու բուրդ ընելով: Կառապան չկար. թերևս

վար նետուած էր , կամ ետեւը մնացած . պատմութիւնը բան մը չըսեր այս մասին : Կառքը ճամբուն գրեթէ ամբողջ լայնութիւնը կը լեցնէր , և որչափ որ աղջիկը ջանար պատին փակչիւ , ստոյգ կ'երևէր որ ինք և մանկիկը կտոր կտոր պիտի ըլլային : Այս բոլորը անցան աղջկան մտքէն , այն մէկ վայրկեանին երբ օգնութեան համար նայեցաւ առջիւ , ետեւը և բոլորապէս : Անմիջապէս մանկիկը պատին վրայէն անդի խոտաւէտ դաշտը նետեց : Կառքը մեծ շառաչունով եկաւ , անցաւ , ետեւ թողլով անկենդան դանդաւած մը , մեռած աղջիկը , մինչ պատին միւս կողմէն վերցոյցին մանկիկը որ հայրս թէ ճգնուած մը ունէր : Հաւատարիմ աղջիկը ամէն ջանք ըրած էր ազատելու համար իրեն յանձնուած մանուկին կեանքը : Երբեք զինուոր մը պատերազմի դաշտին վրայ իր պարտականութիւնը կատարած տանէն չէ մեռած աւելի քաջութեամբ քան այս աղքատ աղջիկը :

ԳԱԼԻԼԵՈՍ

Գալիլէոս աշխարհիս ամենէն մեծ խորհողներէն մին էր , և ապրեցաւ այնպիսի ժամանակ մը երբ աղիտութիւնը և տեղորոշապաշտութիւնը շատ մեծ էին , այնպէս որ անոր հանճարին ըլլալ մեծ պայծառութեամբ կը փայլէր : Ենաւ իտալիոյ փիլոսոփայութիւնը : 1564ին , իր հայրը , որ ճարտար երաժիշտ էր և մշակուած մտքի տէր անձ մը , որոշեց բժիշկ ընել իր որդին , ուստի Գալիլէոս այդ քաղաքին համալսարանը մտաւ տասներեօթը տարեկան եղած տանն : Յաջորդ երկու տարիներուն միջոցին այնչափ սիրեց ուսողութիւնը որ հայրը ստիպուեցաւ հասնիլ որ զիտութեան այդ ճիւղին նստիլու իր որդին : Քստանը չորս տարեկան չեղած իր բոլոր ժամանակակիցներէն առաջ անցած էր : Փիլոսոփայի մայր եկեղեցիին մէջ ճօճող կանթեղը դիտեց և անկէ հանեց ճօճանակին սկզբունքը : Փիլոսոփայի հակած աշտարակին գաղտնիքը քարտուով փորձեր ընելով գտաւ մարմիններուն անկման օրէնքները : Փորձերով գտաւ նաև մարմիններուն տեսակարար ծանրութիւնը գտնելու եղանակը : Փիլոսոփայի համալսարանին մէջ երեք տարի փրօքէտոր եղաւ , և 18 տարի՝ փատուայի մէջ , և այս միջոցին յաճախակի այդ օրուան զիտական թերթերուն յօդուածներ կը գրէր : Զբոսաշրջի , հեռագրիտակը և խոշորացոյցը իր ամենէն կարևոր հնարքներն են : Իր բնա-

կութիւնը փոխադրեց փատուայէ Ֆլորենցա , ուրիշ այցելեց Հռոմ : Եկեղեցական ատեանէն հերետիկոսութեան յանցանքով դատապարտուելուն վրայ յով յաճախ կը լսուի : Իր հերետիկոսութիւնը սա էր որ կը շատագոյնը կոպեռնիկոսի դրութիւնը զոր հիմնադրեց մարդ կ'ընդունի իբրև ճշմարիտ : Աքսորուեցաւ Սիեննա ուր մեռաւ 78 տարեկան հասակին մէջ , 1642ին , այն տարւոյն մէջ երբ Խաչակ Նեոտն ծնաւ :

ՃՇՄԱՐԻՏ ԳԱԶՈՒԹԻՒՆ

Այն աղայք որ վախնալով թէ իրենց ընկերներէն կը սարբերին , կը



ԳԱԼԻԼԵՈՍ

վարանին ընելու այնպիսի բաներ որ գիտեն թէ ուղիղ են , կրնան քաջալերուիլ հետազայ դէպքէն որ պատահեցաւ Ուալինկիլմը զորսպետին տան մէջ , Ամերիկացոյ ոչ առաջին պատերազմին ժամանակը : Մեծ հացկերոյթ մը կը արուէր , և ժամանակին սովորութեանց համաձայն , գինի ալ կար սեղանին վրայ : Հիւրերուն մէջ կը գլուխուէր սպայ մը որ հացկերոյթը լիննալէն քիչ առաջ հրաւիրուեցաւ իր հիւրընկալին իր հետ գաւաթ մը գինի խմելու : «Ներեցեք , զորպէս ,» պատասխանեց նա , ճշմարիտ զինուորի մը զիւցազնութեամբ . «Ինձի կանոն ըրած եմ գինի չխմել :» Զարմացման շուրջ մը պարտեցաւ սենեակին մէջ , սակայն ամենէն աւելի զարմացաւ նոյն իսկ այդ սպան , տեսնելով որ Զօր Ուալինկիլմը կը գոյլէ իր ընթացքը :

սելով , « Կը յարգեմ մեր բարեկամը իր անկեղծութեան և հաստատաւորութեանը համար որով կը փարի կանոնի մը որ երբեք չկրնար իրեն զուսել :»

Այն աղան որ իր ընկերներուն մատուցած մէկ սիկարը կամ գաւաթ մը գարեջուրը , մերժելու քաջութիւնը ունի , թերևս անոնց մէջ միշտ չգտնէ իրեն համամիտներ , բայց կատարելագէտ վտահ կրնայ ըլլալ թէ պիտի ընդունի իր լաւագոյն և հզորագոյն բարեկամին , Յիսուս Քրիստոսի , գովեստը :

ՇՆՈՐՀԱԿԱՆ ԷՔ

Օր մը , կ'ըսէ բարեկամ մը , գացի այցելել հիւանդանոց մը ուր կը գտնուէին շատ մը աղքատ ծեր կիներ որ մարդասիրութեամբ և զգուշութեամբ կը խնամուէին Գթութեան Բոյրերէ որոց յանձնուած էր այդ հաստատութեան վարչութիւնը : Մեծ հաճոյքով տեսայ թէ շատ տաքուկ և կոկիկ կը պահուէին ծեր կիները , և թէ շատ լաւ կը մատակարարուէր իրենց կերակուրը այն կիներուն ձեռքով որոց կ'իյնար այդ գործը : Երբ կիներէն մէկուն ըսի թէ պէտք էր որ շատ շնորհակալ ըլլար այդ բարի Բոյրերէն :

«Շնորհակալ ըլլալ»՝ գոչեց նա մեծ հեգնութեամբ : «Ի՞նչ բանի համար շնորհակալ ըլլալու եմ : Իրենց պարտքը չէ՞ մեզ խնամել :»



Կը յուսամ որ իմ փոքրիկ ընթերցողներէս ոչ մին այս աղքատ , ազէտ ծեր կնկան չափ չար է , բայց կը վախնամ որ անոնցմէ ոմանք իրենց հայրիկին և մայրիկին նկատմամբ նոյնպէս կը խորհին : Տղաքներ և աղջիկներ , առաւել ձեր անկողիններէն կ'ելլէք և ձեր հանգիստ նախաճաշը պատրաստ կը գտնէք առանց ձեր կողմանէ բան մը ընելու : Այսպէս պատրաստ կը գտնէք և կը վայելէք ձեր միւս ճաշերն ալ : Պառկելու անկողին ունիք և հագնելու հանդերձ , և գիրքեր և հարկուաւոր ուրիշ բարիքներ որ կարծես ծառերու վրայ կը բուսնին որովհետև անոնց համար ջանք մը չէք ընել կամ նեղութիւն մը չէք քաշեր գուռք : Եւ սակայն անոնց համար մեծ աշխատանք քաշող կայ : Հայրդ որ կը գործէ , մայրդ որ կը հնարէ և կը ծրագրէ եթէ սպասաւոր ունի , կամ անձամբ կերա-

կուր կ'եփէ, կը լուայ և կը կարէ, եւ թէ չունի սպասաւոր: Երբեք խորհած էք շուրհակու ըստ ձեր ծնողներէն ձեզ ցուցած խնամքին և մարդասիրութեան համար: Կը ջանա՞ք ցուցնել ձեր երախտագիտութիւնը, անոնց օգնել ու եւ կերպով, ինչպէ՞ս փայտ և ածուխ բերելով, ձիւնը աւելով, ձեր սենեակը յարգարելով, կամ հոգ տանելով որ հայրիկին աթուղ և հողաթափները շտկուած ըլլան, որպէս զի ուրախանայ երբ դայ հանգչիլ: Երբեք կը խորհի՞ք մայրիկին փարիլ և անուշիկ համբոյր մը տալ անոր երբ դպրոցէն տուն կու գաք: Կամ եթէ աւելին չկրնա՞ք ընել, կը ջանա՞ք ներութիւն չտալ ուրիշին, ձեր գործերը լաւ ընելով: Եթէ ասկէ առաջ երբեք այսպէս ըրած չէք, եթէ երբեք խորհած

մին, թերեւս աւելի երկրպագութիւն կ'ընդունի քան ուրիշ ու եւ չաստուած, վասն զի Հնդկիկները կը հաւատան թէ անոր բարկութիւնը իջեցնելու են: Իր կինը ֆայի կը ներկայացուի իբրև աւելի արիւնարբու և անգուժ քան ինք, Սիվա: Դիցու հին է թուկ կոչուած ազան դաւորներուն որոց կրօնական պաշտամանց մէկ մասն է մարդիկ սպաննել: Աստուածաշունչին կրօնքը կոչում կ'ընէ մարդուն բնութեան լաւագոյն և ազնուագոյն կողմերուն: Կը սորվեցնէ

ԹՈՂԹ

Առաջին թուղթը շինուեցաւ Կապիրոս կոչուած եռանկիւն, տասը ոտք բարձր եղէգէն որ Եգիպտոսի մէջ կը բուսնէր: անոր ներսի խաւերը խնամով կը տարածէին, և մաս մաս իրար փակցընելով կը պատրաստէին թուղթ մը որուն վրայ կրնար գրուիլ: Եգիպտոսցիները այս թուղթին մեծ կարևորութիւն կու տային, որովհետև անով կարող կ'ըլլային աշխարհի մեծ գիրք շինողները ըլլալ:



ՀՆԴԿԱԿԱՆ ԿՈՒՌՔԵՐ

չէք այս բաներուն վրայ, սկսեցէք խորհիլ անոնց վրայ, և զանոնք գործադրել հիմա, այսօր: Եւ նոյն աստն մի մտնաք շնորհակալ ըլլալ Աստուծոյ որ ձեզի տուած է ոչ միայն հայրիկ և մայրիկ, այլ ամէն օրհնութիւն որ կը վայելէք այս աշխարհին մէջ և ամենէն մեծ օրհնութիւնը որ է յաւատեանական կեանք իր Որդիին, մեր Փրկիչին, Յիսուս Քրիստոսի, ձեռքով, որ տուած է իր Սուրբ Հոգին մեզ առաջնորդելու մեր բոլոր կենաց մէջ և վերջապէս մեզ տանելու երկինք:

ՀՆԴԿԱԿԱՆ ԿՈՒՌՔԵՐ

Հնդկաստանի անհամար չաստուածներուն ամենէն խիստն է Քալի, Սիվայի կինը, Սիվա, կործանարարը, Հընդկաց երեք գերագոյն չաստուածներէն

մեզ ըլլալ սիրող, գթած, առատաձեռն, համբերող և մաքուր: Քալիի կրօնքը կոչում կ'ընէ մարդուն բնութեան ամենէն յոռի կողմերուն: Կը սորվեցնէ մարդոց ըլլալ խարբայ, անգուժ, անձնասէր և հեշտասէր:

Հնդկական դիցաբանութեան խառնակութիւնները գրեթէ անհուն են: Նոյն չաստուածը կը պաշտուի տարբեր ձևերով և տարբեր անուններով: Քալիի մէկ ձևը կը կոչուի Սև Քալի, սակայն այս ձևով եղած աստն Հնդկայացուի իբրև Սիվայի կինը, այլ Մալան անուն չաստուածի մը կինը: Այս երեսին վրայի երկու պատկերներուն առաջինը կը ներկայացնէ Սև Քալին, և երկրորդը ուրիշ չաստուած մը որ կը կոչուի Փարամասաթթի:

Պապիրոսը կ'աճէր Նեղոս գետին վերի և վարի մասերուն մէջ, սակայն երկու հազար հինգ հարիւր տարիէ աւելի առաջ Եսայի մարգարէն մարգարէացաւ թէ «գետին քովը ու գետին եզերքին վրայ եղող մարգարէները և գետին բոլոր վարուցանը պիտի չորնայ, ցիրուցան ըլլայ ու կորսուի» (Ես. ԺԹ. 7): Եւ այսօր պապիրոսը չգտնուիր Եգիպտոս: Կրնա՞ք է, ինչպէս որ մարգարէն ըսաւ. և անոր հետ կորսուած է Եգիպտոսի գրական փառքը ու պատրանքը:

Երբ մարդիկ սորվեցան թուղթ շինել քուրջերէ, ալ պէտք չունեցան պապիրոսի, և հիմա բազմաթիւ նիւթերէ թուղթ կը շինուի—գրեթէ ամէն բանէ որ կրնայ ճնշուիլ և կահուղ զանգուածի մը փոխուիլ: Յիսուսն աւելի տեսակ ծառի կեղև

կը գործածուի թուղթի համար, մինչ պատուած մաշած տուրքակներէն պատուական թուղթ կը շինուի : Թուղթ կը շինուի պանանայի կեղևէ, լուբիայի, բակլայի, ևն. կոթերէն, ոլունի երկայն ճիւղերէն, հնդկընկայի թերեւէն, յարդէ, անուշ ջուրի և ծովի խոտերէ և հարիւրէ աւելի տեսակ ուրիշ խոտերէ : Թուղթ շինուած է մազէ, մուշտակէ և բուրդէ, ասբեստէ որ կրակին կը դիմանայ, գայլխոտի ճիւղերէ և գրեթէ ամէն տեսակ սերմի կեղևէ : Տերեւներէ աղնի զօրաւոր թուղթ կը շինուի, ինչպէս նաև եղիպտոցորենի կեղևներէն և տերեւներէն, և գրեթէ ամէն տեսակ մամուռէ թուղթ կրնայ շինուիլ : Մեշնորհներ արուած են սոցյի փոշիէ և տաշեղներէ, դժնիկէ և դժնիկի բուրդէ, ծխախոտի կոթերէ և խաղախորդի համար գործածուած ծառի կեղևներէ թուղթ շինողներու : Կ'ըսուի թէ Միացեալ Նահանգներուն մէջ երկու հազարէ աւելի մեծաշնորհ արուած է թուղթի շինութեան համար :

Ինչ որ ըլլայ նիւթը գործողութիւնը նոյն է : Նիւթը աղացուելով կակուղ զանգուած մը կ'ըլլայ, յետոյ բարակ խառով մը կը տարածուի տափարակ մակերեսի մը վրայ և կը չորցուի : ասոր յաջորդող գործողութիւնը կախեալ է թուղթի այն տեսակէն զոր շինել կ'ուզուի :

Թուղթը շատ զամանայի բաներու կը գործածուի : Մարդոց խօսքերը և Աստուծոյ խօսքերը անոր վրայ գրուելով կը պահուին : Հոգ տանինք որ լաւ բաներու գործածենք թուղթը, և խրաչինք այն թուղթէն որուն վրայ գէշ բաներ գրուած կամ ապուած են :

ԲԱՌԻՐՆ Ի ՎԱՐ ՎԱԶԵԼ

«Ո՛հ, Շուշան, Շուշան, կեցուր դիս :» Այսպէս կը պոռար սարսափով տղայ մը որ սկսած էր ծովեզրը հակող գահավէժէ մը վար վազել, և տեսաւ թէ չէր կրնար ինքզինք կեցնել : Հետզհետէ աւելի արագ կ'երթար, մինչև որ վերջապէս գլորեցաւ և ինկաւ յատակը : ճզմուած և վնասուած, և սուկումէն ու ցաւէն լարով : Պարսպ տեղը էր քրջը պոռացած էր որ իրեն օգնէ : Գահավէժին գագաթը կայնած էր քյոյրը կրնար տեսնել անոր վտանգը, սակայն չէր կրնար ազատել զնա : Կը յուսանք թէ այդ տղան սորվեցաւ սա գաղը, որ ճշմարիտ է միշտ, թէ միակ ապահովութիւնն է երբեք չսկսիլ

դէպ ի վար վազել, վտանգի ընդհանրապէս երբ անգամ մը սկսինք վար վազել, ա՛լ անկարելի կ'ըլլայ կենալ : Մէկ քայլը ուրիշ քայլի մը ճամբայ կը բանայ. ամէն մէկը մեղքին մէջ աւելի կ'ընկղմէ մեզ, մինչև որ անկարելի կ'ըլլայ ետ դառնալ : Կը ստիպուինք գահավէժին մինչև յատակը երթալ, հոն ինքզինքնիս գտնելու վիրաւորուած, կաղ, և բոլոր մեր կեանքին մէջ թշուառ ըլլալու դատապարտուած :

Սիրելի բարեկամներ, սկսած էք վար տանող ճամբուն մէջ քայլել : Թերևս դեռ նոր սկսած էք, թերևս միայն քանի մը քայլ առած էք : Զգո՛ւ չէք : Հիմա է որ ետ կրնաք դառնալ, եթէ քիչ մըն ալ առաջ երթաք, ալ անկարելի պիտի ըլլայ : Ո՛հ, ապահով և մաքուր ճամբաներուն դարձէք մինչ կրնաք : Գիշտատճ ճամբան թերևս հաճելի է. նոյն իսկ վտանգը կրնայ հրապոյր մը ունենայ ձեզ համար : Մակայն եթէ ականջ չկախեք խրատի, և տակաւին քայլեք այդ վտանգաւոր ճամբուն մէջ, շուտով պիտի տեսնէք թէ ա՛լ ձեր անձին վրայ իշխանութիւն չունիք : Գայնժամ, թէ և օգնութիւն ինքզինք, պարսպ պիտի ըլլայ և ուրիշին ձեզ օգնեն անկարելի : ձեզ ազատելու համար երկնցուած ձեռքերը պիտի չկըրնան ձեզ հասնիլ : պիտի չկրնաք ետ դառնալ. արեւը բլուրն ի վար պիտի վազէք :

Ե՛ս դարձէք. ե՛ս դարձէք մինչ դեռ կրնաք ետ դառնալ :

«ՔԻՉ ՄԸ ԵՏԲԸ ՊԻՏԻ ԸՆԷԻ»

Փոքրիկները շատ կը սիրեն ըսել, «Քիչ մը ետքը պիտի ընէի :» Տղան թոյլ կու տայ որ առնէտները ուտեն հաւու ձագերը : Քիչ մը ետքը պիտի գոցէր ծակը և թակարդ պիտի լարէր առնէտները բռնելու համար. սակայն ժամանակին չըրաւ, և հաւու ձագերը կերուեցան : Ինքզինք կը միւթ թարէ կորուստին համար և իր անհոգութիւնը կ'արդարացնէ, ըսելով, «Քիչ մը ետքը պիտի ընէի :»

Ախոռի մէջ ձի մը կոտրած տախտակներէն վար կ'իյնայ և ոտքը կը կոտրի, և որպէսզի չչարչարուի ձիուն տէրը կը սպաննէ զայն : Քիչ մը ետքը պիտի նորոգէր ախոռին այդ տկար կէտը, և այսպէս ինքզինք կ'արդարացնէ : Տղան ոտքերը կը թօլէ և կը նստի առանց կօշիկները փոխելու. սաստիկ պաղ կ'առնէ, և կը ստիպուի շա-

րաթ մը բժիշկին խնամքին յանձնուիլ : Մայրը ըսած էր անոր որ իր թաց կօշիկները փոխէ երբ ներս գայ, և տղան քիչ մը ետքը պիտի ընէր այդպէս, սակայն չըրաւ :

Աղջիկը իր հանդերձը այնչափ գէշ կերպով կը պատուէ որ թէ և իր բոլոր ջանքով կարկտէ՛ չկրնար առաջուան չափ վայելուց ընել զայն : Փոքր պատուուածք մը կար առաջ և քիչ մը ետքը պիտի կարէր զայն, սակայն մոռցաւ : Կրնանք օրինակները բազմապատկել, կրնանք այնպիսի օրինակներ յառաջ բերել որ կը պատահին ամէն տան մէջ և գրեթէ ամէն մարդու կամ կնոջ, տղու կամ աղջկան : «Յապաղումը» ոչ միայն «ժամանակի գող» է, այլ նաև ահազին չարիքներ գործող :

Եթէ Պարոն «Քիչ մը ետքը պիտի ընէի»ն քու առնդ կը բնակի, բաէ անոր որ երթայ : Ծոյլ և զգուելի է : Անյատկելի չարիքներ գործած է : Այն տղան կամ աղջիկը որ մանկու թիկնէ անոր հետ կ'ապրի՝ շատ թշուառ պիտի ըլլայ բոլոր կեանքին մէջ : Տունէն դուրս վաճառէ Պարոն «Քիչ մը ետքը պիտի ընէի»ն և ա՛լ ներս մի՛ առներ : Անմիջապէս ըրէ այն բաները զորս քիչ մը ետքը պիտի ընէի :

ՊԱՏԱՍԻԱՆ ՅՈՒՆԻՍ ԱՄՍՈՅ ՀԱՆԵԼՈՒԿԻՆ

Կ	Ա	Ն	Ա	Յ
Ա	Բ	Ա	Ն	Ա
Ն	Ա	Գ	Ա	Բ
Ա	Ն	Ա	Ն	Ի
Յ	Ա	Բ	Ի	Ն

Լուծեցին, Կ. Պոլս, — Յովսէփ Փուշմանեան, Յրանկիւ Ս. Աճէմեան, Աստղիկ Գ. Ս. Գաբրիէլեան, Բերուշ Յ. Յովսէփեան, Յովսէփ Հայկազն : Պրուսա, — Զարուհի Ա. Ալթունեան, Անիկ Մ. Միլերեան : Պարսիկ, — Զորաբարէլ Ս. Գառապեան, Տիգրան Գ. Միլերեան, Բ. Աբրահամեան, Խաչիկ Յ. Պոստրեան, Հրատ Լիթմեքչեան : Խարբեր, — Մարտիրոս Գ. Պէննէեան : Արատիա, — Ն. Պ. Զըլուեան, Ս. Պ. Հէթումեան : Կարին, — Կիւրիսեա Ե. Քէլէզպաշեան :

Ամերիկայի Միտինսոյց Անկեղծեան Կողմէն

Արտօնատար

Տնօրէն — Մարտիրոս Զ. Ս. ՊԱՆՆԸՄ

Ֆինանսըրը Երանուհի Կ. Կ. Կ. Կ.



ԿՈՍՏԱՆԴՆՈՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ե